# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2020 թվականի N 1606 - Լ

## ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել՝

1) երեխայի իրավունքների պաշտպանության 2021 թվականի տարեկան ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) երեխայի իրավունքների պաշտպանության 2021 թվականի տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանված կարգով՝ երեխայի իրավունքների պաշտպանության 2021 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի նախագծի կազմում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ — Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1606 - Լ որոշման

# ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
# ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
# 2021 ԹՎԱԿԱՆԻ

## I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. «Երեխայի իրավունքների պաշտպանության 2021 թվականի տարեկան ծրագիրը» (այսուհետ՝ ծրագիր) մշակվել է «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:
2. Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի հունվարի 9-ի N 5-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 48-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությունը:
3. Ծրագիրը համահունչ է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ծրագրի» դրույթներին, համապատասխանում է երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում ստանձնած միջազգային պարտավորություններին և ուղղված է երեխաների, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների սոցիալական պաշտպանության հիմնախնդիրների լուծմանը:

## II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

**Ծրագրի նպատակն է՝**
4. երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, սոցիալական պաշտպանության իրավունքի ապահովումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային և նրա ընտանիքին կարիքահենք ծառայությունների տրամադրումը, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում երեխաների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը՝ անկախ իրենց և/կամ ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամատարների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքներից:
**Ծրագրի խնդիրներն են՝**
5. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի, դաստիարակության, ուսման, ֆիզիկական և մտավոր զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացումը.
6. բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա հաստատություններում խնամք ստացող երեխաների ընտանիք վերադարձի ապահովումը.
7. բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատությունների շրջանավարտների սոցիալական պաշտպանությունը, նրանց հետագա ինքնուրույն կյանքի կազմակերպման և ներառման գործընթացի նպատակով բնակելի տարածությունով ապահովելը՝ բնակարանների վարձակալությունը.
8. կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, նրանց ընտանիքների հիմնախնդիրների վերհանումը, գնահատված կարիքների հիման վրա սոցիալական,

հոգեբանական, մանկավարժական, առողջապահական, մասնագիտական կողմնորոշման, իրավական աջակցության տրամադրումը.
9. շուրջօրյա խնամքի հաստատություն երեխայի մուտքի կանխարգելումը՝ այլընտրանքային ծառայությունների ցանցի, այդ թվում՝ խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացման միջոցով:

## III. ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

10. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) 5 հաստատությունում (մանկատուն) իրականացվում է առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 570 երեխայի շուրջօրյա խնամքի, դաստիարակության ապահովումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Մանկատներից երեքը հատուկ է՝ մասնագիտացված, որտեղ խնամվում է ծանր հաշմանդամություն ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական և ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի մտավոր և ֆիզիկական խնդիրներով շուրջ 450 երեխա:
11. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ցերեկային խնամքի ծառայություն տրամադրող 6 պետական հաստատությունների կողմից ծառայություն է մատուցվում 2-18 տարեկան շուրջ 600 երեխայի: Կենտրոնները ծառայություն են տրամադրում ոչ միայն երեխաներին, այլ նաև ընտանիքներին՝ ապահովելով սոցիալ-հոգեբանական օգնության, իրավական խորհրդատվության, ուսումնադաստիարակչական ծառայությունների, մասնագիտական կողմնորոշման, արվեստի միջոցով թերապիայի, օկուպացիոն թերապիայի (վերականգնողական վարժանքներով թերապիա) տրամադրումը, առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, ժամանցի, ինչպես նաև սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումների կազմակերպումը: Նշված բոլոր ծառայությունների նպատակն է երեխային և նրա ընտանիքին աջակցելը՝ ապահովելով երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքը: Քովիդ-19-ի պայմաններում, երբ նշված հաստատությունները ծառայությունները տրամադրել են հեռավար եղանակով՝ բոլոր շահառու երեխաների ընտանիքներին երկշաբաթյա կտրվածքով տրամադրվել է սննդի զամբյուղ:
12. 2020 թվականից նախարարությունն ընդլայնել է ցերեկային ծառայությունների ծածկույթը՝ հանրապետության 20 խոշոր բնակավայրերում ծառայություններ պատվիրակելով հասարակական կազմակերպություններին: 2020 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ պատվիրակված հասարակական կազմակերպությունների կողմից նշված ծառայությունը միջինը տրամադրվել է 3566 երեխայի: Պայմանավորված ՔՈՎԻԴ-19 համավարակով՝ ծառայությունները արտակարգ դրության ժամանակահատվածում տրամադրվել են հեռավար եղանակով: Ծառայությունն ունի նաև շարժական բաղադրիչ՝ ուղղված սպասարկելու այն համայնքների երեխաներին, որտեղ ծառայությունը տեղակայված չէ, սակայն աջակցության կարիք կա:
13. «Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը ցերեկային խնամքի բաղադրիչից զատ ունի նաև շուրջօրյա բաղադրիչ, որի շնորհիվ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան 25 երեխայի տրամադրվում է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք, կարիքահենք ծառայություն՝ նպատակ հետապնդելով խնդիրների վերացման արդյունքում՝ կանխել երեխայի և ընտանիքի երկարաժամկետ բաժանումը:
14. Երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող պետական հաստատություններում խնամվող դպրոցում սովորող երեխաներին գրպանի ծախսերի համար, որպես դրամական աջակցություն, պետական բյուջեով նախատեսված միջոցների

շրջանակներում ամեն ամիս տրամադրվում է մանր ծախսերի համար նախատեսված գումար (գրպանի գումար):
15. Մանկատների տվյալ տարվա շրջանավարտներին տրամադրվում է միանվագ դրամական օգնություն:
16. 2020 թվականի ապրիլի 2-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1324-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության N 438-Ն որոշումը, որի հատկանշական արդյունքն այն է, որ ցերեկային խնամքի ծառայություններ տրամադրող կենտրոններ հաճախող հաշմանդամություն ունեցող և կենտրոնից առնվազն 500 մետր հեռավորությամբ բնակվող՝ տրանսպորտից օգտվող երեխաների համար կենտրոններն ապահովելու են տրանսպորտի ծախսերի դրամական փոխհատուցում:
17 ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի N 432-Լ որոշմամբ հաստատվել է երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը:
**18.** ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի N 437-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 24-ի N 381-Ն որոշման մեջ, որի նպատակն է ապահովել երեխայի իրավունքների ու շահերի պաշտպանությունը, հստակ սահմանել հաստատությունների տիպերը:
**19.** ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 551-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 470-Ն որոշման համաձայն՝ ցերեկային աջակցության կենտրոնների ցանցն ընդլայնվում է՝ ընդգրկելով ողջ հանրապետության տարածքը, ինչպես նաև գործելով համընդհանուր չափորոշիչով: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող 16-23 տարեկան անձանց համար նախատեսվում է ստեղծել լրացուցիչ ծառայություն՝ անկախ ապրելակերպ ուղեկցող կյանքի ծառայությունը՝ ինքնուրույն կյանքով ապրելուն ուղղված և մասնագիտական հմտություններ ձեռքբերելու նպատակով:
20. ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 31-ի N 1507-Ն որոշման համաձայն՝ 2020 թվականի հունվարի 1-ից լուծարվել է «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ը: Ոլորտում իրականացվող բարեփոխումների (մասնավորապես՝ վերոնշյալ որոշմամբ 3 հաստատությունների լուծարման) արդյունքում շուրջօրյա հաստատություններից ընտանիք է վերադարձել շուրջ 400 երեխա:
ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ հունիս ամսվա դրությամբ լուծարման ենթակա էր նաև «Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը, սակայն պայմանավորված խնամք ստացող երեխաների խնամքի ընդհատման ռիսկի կանխարգելումով և ծառայությունների շարունակականության ապահովման անհրաժեշտությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ստեղծման ենթակա ընտանիքի աջակցության կենտրոնի տեղակայումը ենթադրվում է հիմնել մեկ շենքում՝ նպատակահարմարություն է առաջացել լուծարման գործընթացի փոխարեն իրականացնել «Գյումրու քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ին միաձուլման միջոցով նոր հաստատության ստեղծում: Ներկայում ընթանում են օրենսդրական հիմքերի ապահովմանն ուղղված աշխատանքները:
21. Ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով: Աշխատանքներն իրականացվում են ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի անմիջական աջակցությամբ՝ նպատակ

հետապնդելով համակողմանի աշխատանքի արդյունքում ապահովել համապատասխանեցումը Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած մի շարք միջազգային պարտավորություններին, մասնավորապես՝ «Երեխայի իրավունքների մասին», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիաներին:
22. 2020 թվականի հունվարից պետության կողմից պատվիրակման միջոցով՝ 10 մարզերում և Երևան քաղաքում ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվում է «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ»՝ ներառյալ «Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնահրային օգնության փաթեթի տրամադրում» ծրագիրը, որի շրջանակներում շահառու երեխաները և նրանց ընտանիքները ստանում են ծրագրի նպատակներից բխող ծառայություններ (մասնագիտական աջակցություն, սոցիալական աջակցություն՝ սննդի զամբյուղ և էլեկտրաէներգիայի փոխհատուցում, բնահրային փաթեթ): 2020 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ շուրջ 610 երեխա ընդգրկված են ծրագրում:
23. Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորված Measure Evaluation ծրագրի հետ համագործակցության արդյունքում վերապատրաստվել են խնամակալության և հոգաբարձության մարմնի անդամներ, բոլոր մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետները, երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք իրականացնող հաստատությունների մասնագետները: Վերապատրաստումներն իրականացվել են՝ մոնիթորինգ և գնահատում և կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգում տեղեկության հավաքագրում և վերլուծություն ուղղություններով:
24. ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորված Measure Evaluation ծրագրի հետ համագործակցության արդյունքում իրականացվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգի արդիականացում: Մշակվել են համակարգի միջոցով ոլորտի մշտադիտարկման նոր ցուցանիշներ: Համակարգում ներդրվել են տեղեկության հավաքագրման և վերլուծության մի շարք նոր եղանակներ, որոնք մի շարք հնարավորությունների հետ մեկտեղ թույլ կտան ապահովել տրամադրվող ծառայությունների առավել հասցեականությունը: Ներկայում ընթանում են տեխնիկական լուծումների ապահովմանն ուղղված աշխատանքները, որոնց արդյունքում համակարգում կձևավորվի ներդրված մշտադիտարկման ցուցանիշներին համապատասխան տեղեկություն:
25. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Մասնագիտական կողմնորոշման և կարիերիայի ուղղորդման կենտրոնի կողմից վերապատրաստվել են երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների 17 մասնագետներ՝ նոր գործիքակազմի ներդրման միջոցով մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ մասնագիտացված աշխատանքների իրականացման նպատակով:
26. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականին վերապատրաստվել են խնամատար ծնող դառնալ ցանկացող ևս 11 քաղաքացի: Ներկայում խնամատար ընտանիքում խնամք և դաստիարակություն է ստանում 74 երեխա:
Հայ Օգնության Ֆոնդի (ՀՕՖ) երեխաների աջակցության կենտրոնի հետ կնքվել է հուշագիր՝ խնամատարության ինստիտուտի զարգացման նպատակով: Ձեռնարկվել են այլընտրանքային խնամքի նշված եղանակի բարեփոխմանն ուղղված մեծածավալ աշխատանքներ:

27. Ձեռնարկվել են միջոցներ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կարիքների համապարփակ գնահատման (մշակվել է գնահատման թերթիկի ձևաչափի նախագծային տարբերակ), կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (ԿԴԻՀ) երեխաների ընտանիքներին խորհրդատվության տրամադրման (այդ նպատակով վերապատրաստվել են ցերեկային խնամքի հաստատությունների մասնագետները) նպատակով:
28. ՀՀ վարչապետի 2020 թվականի հունիսի 25-ի N 742-Ա որոշմամբ հաստատվել է «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումը, որի համաձայն իրականացվում են «Խնամակալ նշանակված անձին խնամակալության նպաստի համակարգում հաշվառելու չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի կազմմանն ուղղված աշխատանքները:
29. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման այլընտրանքային ծառայությունների համակարգի զարգացման նպատակով՝ ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 432-Լ որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ Գյումրի և Կապան քաղաքներում երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնների ստեղծման՝ ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ուղարկվել են համապատասխան գերատեսչություններ: Միաժամանակ Երևանում աջակցության կենտրոնի ստեղծմանը (վերակազմակերպմանը) ուղղված աշխատանքներն ընթացքի մեջ են:
30. ՀՀ վարչապետի 2020 թվականի հունիսի 23-ի N 737-Ա որոշման համաձայն՝ հաստատվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխաների որդեգրման համակարգի բարեփոխման, ինչպես նաև փաստահավաք գործունեության իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքերի ապահովման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի գործունեության և գործառույթների իրականացման կարգը, ինչպես նաև փոփոխություններ են իրականացվել աշխատանքային խմբի կազմում:
31. ՀՀ կառավարության 2020 օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 1295-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 925-Ն որոշմամբ փոփոխություններ են իրականացվել Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի անհատական կազմում:
Քովիդ-19-ի պայմաններում՝ Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի ուշադրության տիրույթում է գտնվում երեխաներին մատուցվող ծառայությունների անխափան ընթացքի ապահովումը, ուղղորդման մեխանիզմների հստակեցումը, Քովիդ-19 վարակակիր ծնողների երեխաների խնամքի պատշաճ իրականացումը:

## IV. ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

2021 թվականի ընթացքում իրականացվելու են երեխաների իրավունքների պաշտպանության, նրանց կյանքի որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ: Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում 2021 թվականի տարեկան ծրագրով նախատեսվող միջոցառումները բխում են երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունից՝ նրանց խնամքի, բուժման և դաստիարակության համար նպաստավոր պայմանների ստեղծման, ֆիզիկական և մտավոր բնականոն զարգացման, հոգեբանական վերականգնման և արդյունավետ սոցիալականացման նպատակով. մասնավորապես՝

32. Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայությունների շրջանակում բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում շարունակվելու է իրականացվել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների շուրջօրյա խնամքի, դաստիարակության ապահովումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:
33. Իրականացվելու են ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ:
34. Երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների զարգացման, երեխաների հետագա խնամքն ընտանեկանին մոտ պայմաններում կազմակերպելու նպատակով կստեղծվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին այլընտրանքային խնամք տրամադրող ծառայություններ:
35. Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններում ճգնաժամային բաղադրիչով 2021 թվականին նախատեսվում է ծառայություն տրամադրել 125 երեխայի՝ 154 հաստիքային միավորով:
36. Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայությունների շրջանակում շարունակվելու են իրականացվել կազմակերպությունում ցերեկային ժամերին կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան երեխաների խնամքի տրամադրումը, միաժամանակ հաշվի առնելով երեխաների՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացմանն ուղղված ծառայությունների ընդլայնման անհրաժեշտությունը՝ միջոցներ կձեռնարկվեն՝ վերոնշյալ ծառայությունների տրամադրումը կազմակերպությունից դուրս տրամադրելու նպատակով:
37. Ոլորտի մասնագիտացված կազմակերպությունների պատվիրակման միջոցով՝ երեխաների խնամքի ցերեկային ծառայություններ կտրամադրվեն 2-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված շուրջ 4000 շահառուների:
38. Բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամվող, դպրոցում սովորող երեխաներին ամեն ամիս կշարունակվի տրամադրվել մանր ծախսերի համար նախատեսված գումար (գրպանի գումար):

2020 թվականին՝ 2,664.0 հազ. դրամ՝ միայն 2 խնամքի հաստատությունում խնամվող, դպրոց գնացող և գումարը տնօրինելու հմտություններ ունեցող 86 երեխայի համար նախատեսվել է դրամական աջակցության տրամադրում: 2021 թվականից նախատեսվում է հաշվի առնել երեխաների շուրջօրյա խնամքի բոլոր հաստատություններում խնամվողների կարիքները, բացառել խտրական վերաբերմունքը և գումարը տրամադրել դպրոցահասակ բոլոր երեխաներին, որոնք կարող են այն տնօրինել, ավելին՝ հաշվի առնելով երեխաների 6 տարեկանից հանրակրթությունում ընդգրկվելու փաստը՝ նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ փոփոխություններ՝ գումարի տրամադրման տարիքային շեմը մինչև 6 տարեկան իջեցնելու համար:
39. Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրման միջոցառման շրջանակում կշարունակվի տրամադրել աջակցություն՝ սննդի զամբյուղ, հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:
40. Կշարունակվի երեխաների շուրջօրյա խնամքի և պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրումը:

Հաշվի առնելով պետության որդեգրած քաղաքականությունը, այն է՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը ընտանիքատիպ մոդելով կազմակերպելը՝ անհրաժեշտ է ընդլայնել ծառայությունը ստացող շահառուների շրջանակը՝ ընդգրկելով առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և (կամ) առանց ծնողական խնամքի

մնացած երեխաների թվին պատկանող անձանց, որոնք խնամք են ստանում նաև խնամատար ընտանիքում և 18 տարին լրանալու կապակցությամբ խնամատար ընտանիքում այլևս խնամքը շարունակել չեն կարող: Միաժամանակ նախատեսվում է աջակցությունը տրամադրել ոչ թե միանվագ, այլ 12 ամսվա կտրվածքով: Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտում նախատեսվում է իրականացնել անհրաժեշտ փոփոխություններ:

41. Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրման, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացումը ապահովելու նպատակով ոլորտի քաղաքականությունն ուղղված է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ընտանեկան տիպի այլընտրանքային խնամքի մոդելի զարգացմանը և հաստատություններում խնամվող երեխաների թվի կրճատմամբ՝ ընտանիքում խնամք ստացող երեխաների թվի ավելացմանը:

42. 18-23 տարեկանների խնամքը կազմակերպելու՝ բնակարաններ վարձակալելու, համապատասխան մասնագետների հսկողությամբ նրանց խնամքն ու դաստիարակությունը ապահովելու, ինչպես նաև ուսման և աշխատանքի հարցերում աջակցելու նպատակով՝ իրականացվելու է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտների սոցիալական բնակարանային ֆոնդի հերթացուցակում հաշվառված ընտանիքների համար բնակարանների վարձակալության միջոցառումը:

43. Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի ծառայությունների որակի բարձրացման նպատակով՝ կիրականացվեն տարբեր կառույցների կադրերի մասնագիտական վերապատրաստումներ:

44. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վաղ հայտնաբերման, դեպքերի համակողմանի ուսումնասիրման և երեխաների հետագա խնամքի հարցի որոշման արդյունավետության բարձրացման նպատակով՝ կիրականացվեն խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների, համայնքներում երեխաներին սոցիալական ծառայություններ տրամադրող մասնագետների, այդ թվում՝ դեպք վարողների կարողությունների հզորացում:

45. Կիրականացվի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տեղեկատվական համակարգի արդիականացում, երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի մոնիթորինգային մեխանիզմների բարելավում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ — Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
սեպտեմբերի 29-ի N 1606 - Լ որոշման

# Ց Ա Ն Կ

## ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Պատասխանատու կատարողը | Ակնկալվող արդյունքները | Կատարման ժամկետը | Վերստուգելի չափանիշ | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|
| *ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն* | | | | | | |
| 1. | Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը | 2021 թ. ընթացքում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի 5 մանկատանը կխնամվի 500 երեխա | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 2. | ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br>Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված Երեխայի խնամքն ու դաստիարակությունը կենսաբանական ընտանիքում | 2021 թ. ընթացքում | Ծրագրի շրջանակում ընտանիք կվերադառնա 20 երեխա, կկանխարգելվի 500 երեխայի մուտքը հաստատություններ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե<br><br>Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ | | | | | |
| 3. | Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների 18-23 տարեկան շրջանավարտների համար  բնակարանների վարձակալություն | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է շրջանավարտների իրավունքների և շահերի պաշտպանությունը | 2021 թ. ընթացքում | Ծրագրի շրջանակներում աջակցություն կտրամադրվի 4 շահառուի | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 4. | Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքը կենսաբանական ընտանիքներում | 2021 թ. ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող 3277 երեխայի կտրամադրվեն ցերեկային խնամքի ծառայություններ և նրանց ընտանիքներին՝ սոցիալ-հոգեբանական ծառայություններ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 5. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ժամանակավոր խնամքի տրամադրման ծառայություններ՝ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը | 2021 թ. ընթացքում | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան 125 երեխայի կտրամադրվի մինչև | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ճգնաժամային կենտրոնների կողմից տրամադրվող ծառայությունների միջոցով | | | | 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք | |
| 6. | Երեխաների և ընտանիքների աջակցության տրամադրման ծառայություններ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված երեխայի և նրա ընտանիքի սոցիալ-հոգեբանական վերականգնումը, երեխայի ներառումը հասարակություն | 2021 թ. ընթացքում | Երեխայի և ընտանիքի աջակցության 6 կենտրոնում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 600 երեխայի և նրանց ընտանիքներին կտրամադրվեն սոցիա-լհոգեբանական ծառայություններ | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 7. | Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կյանքի հմտությունների ձեռքբերումը և ներառումը հասարակությանը | 2021 թ. ընթացքում | Մանկատներում խնամվող դպրոցահասակ՝ 7-12 և 13-18 տարեկան 86 երեխայի կտրամադրվի մանր ծախսերի համար նախատեսված գումար (գրպանի ծախս՝ համապատասխանա-բար 2000 և 3000 դրամ) | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 8. | Կենսաբանական ընտանիքներ տեղափոխված երեխաների | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված Երեխայի խնամքն ու դաստիարակությունը | 2021 թ. ընթացքում | 500 երեխայի կենսաբանական ընտանիքների կտրամադրվի | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ընտանիքներին բնահրային օգնության փաթեթի տրամադրում | Հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | կենսաբանական ընտանիքում | | բնահրային օգնության փաթեթ | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
| 9. | Երեխաների շուրջօրյա խնամքի հաստատությունների շրջանավարտներին միանվագ դրամական օգնության տրամադրում | Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի ներառումը հասարակությանը | 2021 թ. ընթացքում | Մանկատների 4 շրջանավարտի տրամադրվի միանվագ դրամական օգնություն | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 10. | Խնամատար ընտանիքում երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության տրամադրում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | Ապահովված է կյանքի դժվարին իրավիճակում հայնված երեխայի խնամքն ու դաստիարակությունը ընտանիքում | 2021 թ. ընթացքում | Խնամատար ընտանիքներում խնամք կտրամադրվի առանց ծնողական խնամքի մնացած 94 երեխայի | Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |
| 11. | Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի տարբեր կառույցների կադրերի մասնագիտական պատրաստման և վերապատրաստման իրականացում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Միջազգային և տեղական հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/ | Իրականացվելու է երեխաների խնամքի այլընտրանքային ծառայությունների համակարգի տարբեր կառույցների կադրերի մասնագիտական ուսուցում և վերապատրաստում | 2021 թ. ընթացքում | Վերապատրաստված մասնագետների տոկոսը՝ 80% | Ֆինանսավորում չի պահանջում |
| 12. | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների, | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերապատրաստված | 2021 թ. ընթացքում | Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անդամների և | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | համայնքներում երեխաներին սոցիալական ծառայություններ տրամադրող մասնագետների, այդ թվում՝ դեպք վարողների ուսուցումների իրականացում | Տարածքային կառավարման և ենթակառուցվածքներինա խարարություն | անդամներ, համայնքներում երեխաներին սոցիալական ծառայություններ տրամադրող վերապատրաստված մասնագետներ | | համայնքների համապատասխան ոլորտի աշխատակիցների 50 տոկոսի վերապատրաստում | |
| 13. | Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների տեղեկատվական համակարգի արդիականացում, մշտադիտարկման մեխանիզմների ներդրում, միասնական տեղեկատվական համակարգի ստեղծմանն ուղղված աշխատանքների իրականացում | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Միջազգային և տեղական հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | Ներդրված մոնիթորինգային մեխանիզմներ, ԿԴԻՀ երեխաների վերաբերյալ առավել ճշգրտված տեղեկություն | 2021 թ. ընթացքում | Համակարգում ներդրված առնվազն 24 մոնիթորինգային ցուցանիշներ, առնվազն մեկ տեղեկատվական ցանցի հետ փոխկապակցման ապահովում: | Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ աղբյուրներ |
